ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. դեկտեմբերի 16 **N 165-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱՎԱԶԴ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի N337-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդաբլուր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 02-100-0004-0009 կադաստրային ծածկագիրը կրող 0.0378 հա բնակավայրերի նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության հողամասը աճուրդային կարգով՝ առանց գործառնական նշանակությունը փոփոխելու, օտարվել է:

Խախտվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսքրքի 3-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9} և 56^{2}-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ ե մ.**

1. Վարդաբլուր համայնքի ղեկավար Արտավազդ Գալստյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ **երկու հարյուր հազար դրամ,** որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ 900005243119 հաշվեհամարին:

2. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Վարդաբլուր համայնքի ղեկավար Արտավազդ Գալստյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդաբլուր համայնքի ղեկավար Արտավազդ Գալստյանին հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆ